ԱՐՓԵՆԻ

Վարչական ղեկավար՝ Սասուն Մոսեյան

Հեռ: 098 13 30 02

Մակերես՝ 19.8 կմ²

Բնակչություն՝ 364

Ինդեքս՝ 2804

smoseyan@mail.ru

Գյուղ Աշոցքի տարածաշրջանում, մարզկենտրոնից գտնվում է 15կմ հեռավորության վրա: Նախկինում ունեցել է Փալըթլի, Փալտլի, Փալութլը, Փալութլու, Փալուտ, Փալուտլի անվանումները: Արփենի է վերանվանվել 1978 թ-ին:

Գյուղը գտնվում է լեռնահովտում՝ ծովի մակարդակից 1920մ բարձրության վրա: Կլիման բարեխառն լեռնային է, ձմեռը տնական, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Լինում են ուժեղ քամիներ, հաճախակի են մառախուղները և ձնաբքերը: Ամառը տաք է, համեմատաբար խոնավ: Տարեկան տեղումների քանակը 600-700մմ: Բնական լանդշաֆտները սևահողային լեռնատափաստանները:

Գյուղի տարածքում կա 19-րդ դարում կառուցված եկեղեցի:

1897 թ-ին գյուղն ունեցել է 598, 1926 թ-ին՝ 479, 1970 թ-ին՝ 404, 1980 թ-ին՝ 369 բնակիչ: Ազգային կազմը մինչև 1926 թ-ը եղել է հայաբնակ, ապա այստեղ բնակություն են

հաստատել ռուսներ: Ըստ ազգային վիճակագրական ծառայության տվյալների համայնքը 2013թ-ի հունվարի 1-ի դրությամբ ունեցել է 351 մարդ: Սեռային կազմում տղամարդիկ կազմումեն 49%, կանայք՝ 51%: Տարիքային խմբերը բաշխված են հետևյալ կերպ. Մինչ աշխատունակներ՝ 31%, աշխատունակներ՝ 52%, հետաշխատունակներ՝ 17%: Ունի 81 տնտեսություն: Ունի դպրոց, գրադարան, մշակույթի տուն, բուժկետ, կապի հանգույց:

Գյուղատնտեսության մասնագիտացման ուղղությունը կաթնամսատու անասնապահությունն է: Զբաղվում են հացահատիկային, կերային կուլտուրաների, կարտոֆիլի մշակությամբ: